

«Գտնել» զԱստուած

Կան մարդիկ, որոնք կը կարծեն, թէ Աստուած «կորսուած» է իրենց կեանքին մէջ եւ անկարելի է գանձել գտնել: Ոմանք ալ կը խորհին, որ Աստուած անսահմանօրէն հեռու է մարդոցմէ, հետեւաբար, գո՛ւր է գանձել օգնութեան կանչելու ամէն ջանք: Եսայի մարգարէն կու գայ պատասխանելու այս երկու խումբի մարդոց ըսելով. «Տէ՛րը փնտոնեցէք, քանի որ անիկա կը գտնուի. գանձել կանչեցէք, քանի որ անիկա մօտ է» (Ես. 55.6): ԶԱստուած փնտոնող մարդուն համար՝ գտանելի է Ան: ԶԱստուած կանչողին համար՝ մօտ է Ան: Եթէ կ'ուզեմք «գտնել» զԱստուած, պէտք է գանձել փնտոնեմք ինչպէս մայր մը կը փնտոնէ իր կորսուած զաւակը, ինչպէս Ս. Կոյսը փնտոնեց Յիսուսը:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱԳՕԹԵՆՔ

Տէ՛ր, իջեցո՛ւր, Սուրբ Հոգիիդ շնորհքները իմ վրաս, որ միայնակ եմ պատերազմի մէջ՝ առանց օգնականի: Սրբէ՛, Տէ՛ր, հոգիիս տաճարը եւ ինձի հետ եղի՛ր երեկոները: Բա՛ց հոգիիս աչքերը եւ լուսատրէ՛ միտքս ու խորհուրդներս: Չօրութի՛ն տո՛ւր ինձի, Տէ՛ր իմ Յիսուս, եւ ընդունէ՛ օրհնաբանութիւնս: Արթնցո՛ւր զիս գիշերուան խոր քունէն՝ գոհանալու եւ օրհնելու քեզ, որ քաւեմ իմ մեղքերս: Սուգ եւ արտասուք շնորհէ՛ ինձի՝ լալու, սգալու եւ անդադար աղօթելու Քու առջեղ: Եփրեմ Ասորի

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՐ ՓՆՏՈՒՆ
ԿԱՐՂԱՄ Սաղմոս 5

Ո՛վ ՏԵՐ, լսէ ինչ որ կ'ըսեմ, նկատի՛ առ հեծեժանքներս: Մտի՛կ ըրէ աղօթքս, ո՛վ իմ Թագաւորս եւ Աստուածս, կ'աղաչեմ քեզի: Ո՛վ ՏԵՐ, առտու կանուխէն լսէ՛ կանչս եւ սպասեմ պատասխանիդ:

Դուն անօրէնութիւն չես սիրեր, ո՛վ Աստուած դուն չես կրնար չարիքին հետ հաշտուիլ: Հպարտները չես հանդուրժեր, եւ կ'ատես անօրէնութիւն գործողները, սուտ խօսողները կորուստի կը մատնես, արիւնահեղ ու նենգաւոր մարդէն կը զգուիս, ով Տէր: Բայց ես քու անչափ սիրոյդ սպաւինամ՝ քու Տունդ պիտի մտնեմ, երկիւղածութեամբ դէպի սուրբ տաճարդ պիտի դառնամ ու երկրպագեմ:


Տէ՛ր, արդարութեամբդ առաջնորդէ զիս, քու ճամբադ հարթէ՛ իմ դիմացս, որպէսզի դառնամուտ թշնամիներս տեսնեն, որովհետեւ անոնց բերանը ստութեամբ լի է, եւ անոնց սիրտը՝ չարութեամբ լեցուն: Բացուած գերեզման է կոկորդին անոնց եւ նենգութեան գործիք դարձեր են լեզուներն անոնց:

Ո՛վ Աստուած, անոնց յանցանքին պատիժը տուր, իրենց խորհուրդները թող կործանեն զիրենք, որովհետեւ քեզի դէմ ըմբոստացան:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտոնել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարգալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԾԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ՔՈՒ ԽՕՍԲԵՂ ԽՍ ՌՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԵԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ , 19 ԱՊՐԻԼ 2020

ԹԻԻ 16

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Գործք 5.34-6.7: Յակոբոս 3. 1-12

ՅԻՍՈՒՍ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 1.1-17

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ (ԿՐԿՆԱԶԱՏԻԿ)

Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Բանը: Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր, որ Աստուած ամէն ինչ ստեղծեց: Առանց անոր ո՛չ մէկ բան ստեղծեց: Կեանքը անով սկիզբ առաւ: Եւ կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ խաւարին մէջ կը փայլի. բայց խաւարը չկրցաւ հասկնալ զայն:

Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ դրկուած մարդ մըն էր, եկաւ Լոյսին համար վկայութիւն տալու, որպէսզի ամէն մարդ անոր միջոցաւ հաւատայ: Ինք Լոյսը չէր, այլ՝ Լոյսին համար վկայ մը: Բանն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով՝ կը լուսատրէ ամբողջ մարդկութիւնը: Աշխարհի մէջ էր անիկա, աշխարհը իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զինք չճանչցաւ: Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց իր իսկ ստեղծած մարդիկը զինք չընդունեցին: Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմինի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծմէ ծնելով:

Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը: Փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն:

Յովհաննէս անոր մասին վկայեց, յայտարարելով.- Ասիկա է ան՝ որուն մասին կ'ըսէի. «Ան որ ինձմէ առաջ գոյութիւն ունէր»:

Անոր լիառատ շնորհքն է, որ մենք բոլորս շնորհքի վրայ շնորհք ստացանք, որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Բրիստոսի միջոցաւ:

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
5.34- -6.7**

Այն ատեն Ատեանին մէջ ոտքի ելաւ Քամադիէլ անունով մէկը, որ Փարիսեցիներէն էր եւ ամբողջ ժողովուրդին կողմէ յարգուած Օրէնքի ուսուցիչ մը, եւ հրամայեց, որ նախ առաքեալները դուրս տանին, եւ ապա ժողովականներուն ըսաւ.

- Ո՛վ Իսրայէլացիներ, լաւ մտածեցէ՛ք եւ ապա որոշում առէ՛ք այս մարդոց մասին: Կը յիշէ՛ք, թէ ժամանակ մը առաջ Թելդաս անունով մէկը եկաւ, որ ինքզինքն երեսելի մէկը կը յայտարարէր, եւ շուրջ չորս հարիւր հոգիներ իրեն միացան, բայց ինք սպաննուեցաւ եւ բոլոր իրեն միացածները քայքայուեցան ու ցրուեցան: Իրմէ ետք Գալիլիացի Յուդա մը ելաւ մարդահամարի օրերուն եւ բազմաթիւ ժողովուրդ ապստամբութեան մղեց իրեն հետ, սակայն ան ալ կորսուեցաւ, եւ բոլոր անոնք որ իրեն յարած էին՝ ցրուեցան: Գալով ասունց, կ'ըսեմ ձեզի. - Այդ մարդոցմէ ձեռք քաշեցէ՛ք եւ ձգեցէ՛ք զիրենք: Որովհետեւ, եթէ անունց խորհուրդն ու գործը մարդոցմէ է՝ պիտի խափանուի, իսկ եթէ Աստուծմէ է՝ չէ՛ք կրնար խափանիլ, եւ թերեւս այդ ձեռով Աստուծոյ դէմ պայքարած կ'ըլլաք:

Ժողովականները հաւանեցան Գամադիէլի խօսքերուն, եւ առաքեալները կանչել տալով՝ ձեռն տուին, ապա պատուիրելով անոնց, որ ա՛լ Յիսուսի անունով չխօսին, արձակեցին զանոնք: Իսկ առաքեալները Ատեանէն հեռացան ուրախանալով, որ Տիրոջ անունին համար անարգանքի արժանացան: Ամէն օր, թէ՛ տաճարին եւ թէ՛ իրենց տուններուն մէջ, անդադար կը սորվեցրնէին՝ Յիսուս Քրիստոսը բարոզելով:



**ՅԱԿՈՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ՆԱՄԱԿԸ
3.1-12**

Նորայրներս, ամէնէն ալ ուրիշները սրբագրելու հետամուտ մի՛ ըլլա՛ք գիտնալով, որ մենք՝ ուսուցանողներս անելի խստութեամբ պիտի դատուինք, որովհետեւ բոլորս ալ յանցանքներ ունինք:

Ան որ գիտէ իր խօսքերը կշռել՝ կատարեալ մարդ է, ինքզինքն իշխելու կարող: Տե՛ս, թէ ի՛նչպէս ձեռք բերանք սանձ կը դնենք՝ որպէսզի մեզի ենթարկուին, եւ անով ձեռք բերանք շարժումները կը կատարենք: Կամ դիտէ՛ նաեւ: Որքան ալ մեծ ըլլան եւ ինչպիսի՛ գորաւոր հովերէ ալ էշուին, փոքրիկ դեկ մը գիրենք կ'ուղղէ դէպի հոն՝ ուր նաւաւարը կը փափաքի տանիլ: Նոյնպէս ալ յեզուն. թէ եւ փոքր անդամ մըն է, բայց մեծամեծ բաներով կը պարծենայ: Գիտէ՛ք, թէ պատիկ կայծը հսկայ անտառ մը կրնայ հրդեհել: Լեզուն ալ կրակ է: Անիրաւութեան աշխարհ մըն է անիկա: Թէ եւ պարզ մէկ անդամն է մարմինին, բայց ամբողջ մարդը կ'ապականէ, եւ գեհէնի կրակով բռնկած՝ ամբողջ կեանքը կրակով կը վառէ:

**Շարունակել ընթերցումը
Աստուածաշունչէն**

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

**ՆՈՐ ԿԻՐԱԿԻ ԿԱՄ
(ԿՐԿՆԱԶԱՏԻԿ)**

Ս. Զատիկի յաջորդող Կիրակին կը կոչուի Նոր Կիրակի կամ Կրկնագատիկ: Յիսուս Յարուժեանէն յետոյ յաճախակի առիթներով երեւցաւ Իր աշակերտներուն: Յարուժեան ութերորդ օրը, Յիսուս դարձեալ երեւցաւ անոնց: Այնտեղ էր նաեւ Թովմաս առաքեալը, որ Յարուժեան օրը չէր տեսած Տէրը եւ ըսէր էր. «Մինչեւ որ գամբերուն հետքերը չտեսնեմ անոր ձեռքերուն մէջ ու մատներս չդնեմ գամբերուն տեղերը եւ ձեռքս չդպրնեմ Անոր կողին, չեմ հաւատար» (Յովհ. 20.25): Յիսուս կը հրահրէ Թովմասը, որ իր ձեռքերը կողին մէջ խրէ եւ շօշափէ: Բայց ան միայն կը բացազանչէ՝ «Տէ՛րս եւ Ա՛ստուածս»:

Յիսուս կ'ըսէ անոր. «Զիս տեսնելու համար հաւատացիր, չէ՞: Երանի՛ անոնց, որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան»: Եկեղեցին, այս յիշատակը կը տօնէ որպէս նաւակատիք Զատիկի: Յոյները Նոր Կիրակին կը կոչեն ԹՈՎՄԱՅԻ ԿԻՐԱԿԻՆ:

Կիրակի կամ Կիրակէ յունարէն բառ է, որ կը նշանակէ Տէրունի օր: Սկզբնական շրջաններուն տարածուած չէր Կիրակի բառը, այլ կը գործածուէր Միաշաբաթ անունը, որպէս շաբթուան առաջին օրը, երբ Քրիստոս յարուժիւն առաւ մեռելներէն: Հետագային է, որ Միաշաբաթի փոխարէն տարածուեցաւ յունարէն Կիրակի բառը:

Կիրակի օրուան համար Առաքելական 34 կանոններու երկրորդը հետեւեալ հրահանգը կու տայ. «Բոլոր Կիրակի օրերը տօն կ'ըլլայ եւ պատարագ կը կատարուի, կը կարդացուին մարգարէական Գիրքեր եւ առաքելական Նամակներ, եւ ապա կը կարդացուի Ս. Աւետարան»:

Քրիստոնեաներուն համար Կիրակի օրը հանգստեան օր է: Սակայն սիրելի ընթերցող, հանգիստը տունին մէջ ամբողջ օրը հանգիստ ընել չէ, ո՛չ ալ մինչեւ ուշ ժամեր քնանալ: Ֆիզիքական հանգիստէն աւելի կարեւորը՝ հոգիի հանգստութիւնն է: Եւ այդ հանգստութիւնը կը զգանք պատարագի մասնակցութեամբ, աղօթքով: Կիրակին չանցնենք քնանալով կամ դատարկ գործերով, այլ՝ աղօթքով:

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ

Զատիկուան յաջորդող Կիրակին է: Յայտնի է, որ Քրիստոսի յարուժեցումը միաշաբաթ օրը նուիրագործուեցաւ եւ դարձաւ Կիրակի, ուստի անոր յաջորդող միաշաբաթը կոչուեցաւ Նոր Կիրակի կրկնագատիկ՝ Կրկին Զատիկ: Նոր Կիրակին կը խորհրդանշէ Քրիստոսի եկեղեցւոյ հաստատման եւ ծաւալման սկիզբը:

Ի՞նչ կը նշանակէ Մայրենի Եկեղեցի:

Հայ Եկեղեցին հոգեւոր մայրն է իր ժողովուրդին եւ ժողովուրդն ալ հոգեւոր գաւակն է անոր: Որովհետեւ ժողովուրդը մկրտութեամբ հոգեւորապէս կը ծնի անոր ծոցէն, անկէ կ'առնէ իր հոգեւոր սրնունը եւ կը պաշտպանուի անոր հովանիին տակ ընդդէմ իր հաւատքին, բարոյականին եւ թշնամիներուն: Այս պատճառով կ'ըսուի ՄԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՑԻ: